ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.08.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/127

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Դերձակ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Լ. Քոչարյանի (լիազորագիր տրված՝ 25.07.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.07.2019թ. թիվ 26/26-1/12244-2019 գրությամբ «Դերձակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 15.07.2019թ. թիվ 397/1 գրության հիման վրա, 22.07.2019թ. թիվ 26/26-1/12244-2019 գրությամբ դիմել է ՀՀ

գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Դերձակ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Դերձակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Դերձակ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից 19.06.2019թ. հայտարարվել է Պատվիրատուի կարիքների համար հագուստի /հանդերձանքի/՝ ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով գնանշման հարցման ձեռքբերման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Դերձակ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 4-րդ չափաբաժնով թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ նշել է հետևյալ դրույթը՝ «Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից»:

Ընկերությունը մասնակցելով Ընթացակարգին, հայտնել է որ իր կողմից ներկայացված ապրանքը համապատասխանում է մրցույթի ապրանքների համար սահմանված բնութագրերին և առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու դեպքում պարտավորվում է դրան համապատասխան ներկայացնել բնութագրերը:

Հանձնաժողովի 27.06.2019թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Դերձակ» ՍՊԸ-ն 4-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից և վերջինիս առաջարկվել է ներկայացվել հրավերի 2-րդ բաժնով սահմանված փաստաթղթերը:

Գնահատող Հանձնաժողովի 04.07.2019թ. ժամը 17:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Դերձակ» ՍՊԸ-ն, որը պետք է ներկայացներ ՀՀ կառավարության 04.05.2017թ, թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ մասի և Ընթացակարգի հրավերի 8.12-րդ կետի 4-րդ ենթակետի որակավորման

չափանիշները հիմնավորող՝ Հրավերի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերը և Ծանուցման մեջ հստակ ընդգծված **1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները պարտավորվում են 2 օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնեն նմուշներ, 2 օրինակից՝ ապրանքի գույնը, տեսքը և որակը հաստատելու ՀԱՄԱՐ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ:**

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը և տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

Ընկերությունը հայտնել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կանխակալ մոտեցում է ցուցաբերվել, դիտավորյալ և կոպտորեն խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով, ինչպես նաև Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջները, որի արդյունքում դիտավորյալ, մյուս մասնակիցների նկատմամբ այլ շահերից ելնելով, մերժել «Դերձակ» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը,

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով,

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են,

Կարգ 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված

ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Դերձակ» ՍՊԸ-ն ուսումնասիրելով «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից 19.06.2019թ. հայտարարված Պատվիրատուի կարիքների համար հագուստի /հանդերձանքի/՝ ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով գնանշման հարցման ձեռքբերման ընթացակարգի հրավերը, և կարդալով հրավերի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ նշված «Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից» դրույթը հանգել է այն եզրահանգման, որ եթե վերջինս ճանաչվի հաղթող մասնակից ապա պետք է մինչև ապրանքների մատակարարելը 2 օրինակից ապրանքները համաձայնեցնի Պատվիրատուի հետ, այլ ոչ թե մինչև պայմանագիր կնքելը, այն էլ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Բացի այդ, Գնահատող Հանձնաժողովի կողմից նաև խախտվել է Կարգի 47-րդ կետով սահմանված դրույթները, քանի որ թիվ 2-րդ արձանագրությամբ վերջիններս պահանջել են ներկայացնել հրավերի 2-րդ մասով նախատեսված թղթերը /որի մեջ բացակայում է նմուշների ներկայացման պահանջը/, իսկ թիվ 3-րդ արձանագրությամբ նմուշներ չներկայացնելու հիմքով մերժել են Ընկերությանը: Բավականին ուշագրավ է և հետաքրքիր նաև այն հանգամանքը, որ Գնահատող հանձնաժողովի կողմից «Դերձակ» ՍՊԸ-ի հայտը մերժելով հղում է կատարվել Ընթացակարգի հրավերի 8.12-րդ կետի 4-րդ ենթակետին, սակայն gnumner.am կայքում առկա հրապարակված 2 հատ հրավերներում նման կետ ընդհանրապես գոյություն չունի: Այս պարագայում անվավեր է գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը, ինչպես նաև չի կիրառվել Կարգի 47-րդ կետը, իսկ գլխավորը խախտվել է հրավերի և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, քանի որ մասնակցից պահանջվել է ներկայացնել ապրանքի ձևանմուշները 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված լինելու պարագայում, այնինքն այն պետք է ներկաայցվել պայմանագիր կնքելուց հետո՝ ապրանքների մատակարարման ժամանակ, ինչպես գրված է Ընթացակարգի հրավերում:

Սակայն Պատվիատուի գնահատող հանձնաժողովը չբավարարվելով նշված ապօրինի գործողություններով, մերժելուց հետո նաև որոշել է Ընկերությանը ներառի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, որպեսզի հետագայում այս կազմակերպությունը չխանգարի իրենց:

Ելնելով վերոգրյալից՝ «Դերձակ» ՍՊԸ-ն խնդրել է ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ՀՀ ֆինանսների նախարարության գրությամբ ներկայացված «Դերձակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել, Ընկերությանը չներառել նշված ցուցակում:

«Դերձակ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/127 ընթացակարգի շրջանակներում 01.08.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.07.2019թ. թիվ 397/1 գրությամբ հայտնել է, որ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար հագուստի ձեռքբերման նպատակով 19.06.2019թ. հայտարարվել է ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը:

2019թ. հունիսի 27-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստում, մրցույթի մասնակից «Դերձակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մրցույթի մասնակցության հայտը արձանագրվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող:

Ներկայացված գնային առաջարկի հիման վրա 4-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Դերձակ» ՍՊԸ-ն: Առաջին տեղը զբաղեցրած «Դերձակ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացվել

Ընթացակարգի ծանուցման մեջ նշված 4-րդ չափաբաժնի «նմուշներ», որը մասնակիցը պետք է ներկայացնի գնահատող հանձնաժողովի համաձայնեցմանը երկու օրինակից՝ ապրանքի գույնը, տեսքը և որակը հաստատելու նպատակով:

Մասնակցի կողմից ներկայացված նմուշները գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանող, որի մասին մասնակցին ծանուցվել է և տրամադրվել է մեկօրյա ժամկետ անհամապատասխանությունների շտկման համար, սակայն վերջինս չի ներկայացրել շտկումները սահմանված ժամկետներում:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով՝ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, 2019թվականի հունիսի 4-ի նիստում որոշում է կայացրել մերժել Ընկերության կողմից ներկայացված հայտը՝ հրավերով սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու հիմքով և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն խնդրել է «Դերձակ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/127 ընթացակարգի շրջանակներում 01.08.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/127 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/127 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դերձակ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.06.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Դերձակ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով, որին ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3. Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ Մատակարար կազմակերպությունը, պայմանագիրը կնքելուց հետո 5 օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ, 2 օրինակից՝ ապրանքի գույնը, տեսքը և որակը հաստատելու համար:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.07.2019թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «Դերձակ» ՍՊԸ-ն պետք է ներկայացներ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի և ընթացակարգի հրավերի 8.12-րդ կետի 4-րդ ենթակետի որակավորման չափանիշները հիմնավորող՝ Հրավերի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև Ծանուցման մեջ հստակ ընդգծված, այն է՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցները պարտավորվում են 2 օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնեն նմուշներ՝ 2 օրինակից՝ ապրանքի գույնը, տեսքը և որակը հաստատելու համար, մինչդեռ «Դերձակ» ՍՊԸ-ն չի ներկայացրել:

5. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամաբ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցնող մասնակից է ճանաչել «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.07.2019թ. թիվ 26/26-1/12244-2019 գրությունը, «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի 15.07.2019թ. թիվ 397/1 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՍՑ-ՆԳ-2019/127

ընթացակարգի շրջանակներում «Դերձակ» ՍՊԸ-ի ներկայացրած դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝

հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված

փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1. շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:
2. չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դերձակ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.06.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Դերձակ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով, որին 27.06.2019թ. ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Ծանուցմամբ նշվել է նաև, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցը պարտավորվում է 2 օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից՝ ապրանքի գույնը, տեսքը և որակը հաստատելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.07.2019թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «Դերձակ» ՍՊԸ-ն պետք է ներկայացներ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի և ընթացակարգի հրավերի 8.12-րդ կետի 4-րդ ենթակետի որակավորման չափանիշները հիմնավորող՝ Հրավերի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև Ծանուցման մեջ հստակ ընդգծված, այն է՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցները պարտավորվում են 2 օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնեն նմուշներ՝ 2 օրինակից՝ ապրանքի գույնը, տեսքը և որակը հաստատելու համար, մինչդեռ «Դերձակ» ՍՊԸ-ն չի ներկայացրել:

Պատվիրատուն «Դերձակ» ՍՊԸ-ին ուղղված 04.07.2019թ. թիվ 391/2 գրությամբ հայտնել է, որ 27.06.2019թ. Ընկերությունը գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ստացել է ծանուցում, որտեղ հստակ ընդգծված էր, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցները պարտավորվում են 2 օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնեն նմուշներ՝ 2 օրինակից՝ ապրանքի գույնը, տեսքը և որակը հաստատելու համար:

Վերը նշվածի պայմանը արտացոլված է նաև հրավերի մեջ կնքվելիք պայմանագրի նախագծի հավելված 1-ի տեխնիկական բնութագրի նշումների մասում, որպեսզի մասնակիցները մինչև մրցույթին մասնակցելը ծանոթ լինեն և պարզաբանման ժամկետի ընթացքում 19/06/2019 18:12-21/06/2019 10:00 հստակեցնեն պատվիրատուի հետ ապրանքի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը:

Պատվիրատուի կողմից համապատասխան փաստաթղթեր ստանալուց հետո ևս 2 անգամ ծանուցվել է մասնակիցներին՝ ձևանմուշը հաստատելու մասին, որը Ընկերությունը ստացել է 29.06.2019թ. և հաստատել է ստացումը, իսկ մյուսը ստացել է սահմանված ժամկետը լրանալու և Ընկերության կողմից ներկայացված նմուշը չհաստատվելուց հետո 03.07.2019թ.-ին:

Ամփոփելով Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի դրույթներով, Ընկերության հայտը մերժվել է անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Ի պատասխան Պատվիրատուի 04.07.2019թ. գրության Ընկերությունը 04.07.2019թ. գրությամբ հայտնել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո

Պատվիրատուի կողմից պահանջված ժամկետում Ընկերությունը ներկայացել է պատրաստի համազգեստի նմուշը ըստ Պատվիրատուի ներկայացրած հայտի տեխնիկական բնութագրի, սակայն առանց մասնագիտական ուսումնասիրության ենթարկելու կամ առանց փորձագիտական եզրակացության հայտարարել եք, որ գործվածքը Պատվիրատուի պահանջներին չի բավարարում և փոխարենը տրամադրել եք մեկ այլ համազգեստ, որից պահանջում եք, որ Ընկերությունը արտադրի և մատակարարի:

Ամփոփելով Ընկերությունը հայտնել է, որ Ընկերության կողմից անհամապատասխանություն չի եղել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.07.2019թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամաբ Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցնող մասնակից է ճանաչել «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ին:

Ամփոփելով վերը նշված փաստերը, արձանագրում եմ հետևյալը.

«ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ 1 Հավելվածով 4-րդ չափաբաժնի գնման առարկայի համար սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսվել է, որ ***<u>մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ</u> պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից***:

Միաժամանակ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածի՝ գնման ժամանակացույցի, լրացուցիչ պայմաններով սահմանվել է, որ ***Մատակարար կազմակերպությունը, <u>պայմանագիրը կնքելուց հետո</u> 5 օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը <u>պետք է ներկայացնի նմուշներ, 2 օրինակից՝ ապրանքի գույնը, տեսքը և որակը հաստատելու համար:</u>***

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 521-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Մատակարարման պայմանագիրը կնքվում է գրավոր:

Այսպիսով, վերը նշված հոդվածների վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ միայն մատակարաման պայմանագիրը կնքելուց հետո է մասնակիցը, որպես մատակարար ձեքբերում որոշակի իրավունքներ և ստանձնում պարտականություններ:

Այսպիսով, գտնում եմ, որ Պատվիրատուն մերժելով «Դերձակ» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո սահմանված կարգով ծանուցվելով չի ներկայացրել Ծանուցման մեջ հստակ ընդգծված, այն է՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցը պարտավորվում է 2 օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնեն նմուշներ՝ 2 օրինակից՝ ապրանքի գույնը, տեսքը և որակը հաստատելու համար, գործել է, ոչ իրավաչափ և հակասել է Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջին, քանի որ նման պահանջ կարող է ներկայացնել մատակարարման պայմանագիր կնքելուց հետո միայն՝ հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի թիվ 1 Հավելվածով 4-րդ չափաբաժնի գնման առարկայի համար սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված «***Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից»*** և թիվ 1 Հավելվածի՝ գնման ժամանակացույցի, լրացուցիչ պայմաններով նախատեսված «***Մատակարար կազմակերպությունը, պայմանագիրը կնքելուց հետո 5 օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ, 2 օրինակից՝ ապրանքի գույնը, տեսքը և որակը հաստատելու համար»*** դրույթները:

Ուստիև հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, հետևաբար առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.07.2019թ. թիվ 26/26-1/12244-2019 գրությամբ «Դերձակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**